

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

№ 33 -Ն «01» սեպտեմբերի 2022թ.

№ 115 -Ն «01» սեպտեմբերի 2022թ.

ք. Երևան

ք. Երևան

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

**«ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ԱՄԵՆԱՄՅԱ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»-Ը
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի № 909-Լ որոշման հավելվածի ժամանակացույցի 2.3.3-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հաստատել Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի լուսաբանման ամենամյա լրագրողական մրցանակաբաշխության անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարար
Վ. Դումանյան



ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարար
Ն. Մկրտչյան



Հավելված

Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի 02.09-ի №338 հրամանի

Հավելված

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և
սոցիալական հարցերի նախարարի
2022 թվականի 02.09-ի №115-Ն հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ԱՄԵՆԱՄՅԱ ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի լուսաբանման ամենամյա լրագրողական մրցանակաբաշխության (այսուհետ՝ Մրցանակաբաշխություն) կազմակերպման և անցկացման կարգը:

2. Կանոնակարգը մշակվել է համաձայն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի № 909-Լ որոշման 2.3.3 կետի:

3. Մրցանակաբաշխության նպատակն է խրախուսել Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի բազմակողմանի, օբյեկտիվ և արդյունավետ լուսաբանումը՝ դրանով իսկ նպաստելով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելմանն ուղղված ազգաբնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

4. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի լուսաբանման մրցանակաբաշխությունն անց է կացվում համաձայն սույն կանոնակարգի:

5. Մրցանակաբաշխությունն անցկացվում է հետևյալ անվանակարգերով՝

- 1) Հեռուստա/ռադիո արտադրանք,
- 2) Տպագիր և էլեկտրոնային նյութեր:

2. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

6. Մրցակաբաշխությունն անցկացնող կազմակերպությունը ընտրվում է՝ մրցույթային կարգով:

7. Մրցանակաբաշխությունն անցկացնող կազմակերպության անդամը կամ լիցենզիայատու չի կարող լինել Մրցանակաբաշխությանը ներկայացված աշխատանքները նահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Գնահատող հանձնաժողով) անդամ:

8. Մրցանակաբաշխությունն անցկացնող կազմակերպությունը պարտավոր է՝

1) Մինչև ընթացիկ տարվա փետրվարի 20-ը հանդես գալ հայտարարությամբ և այն տարածել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջերում, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կանխարգելումը լուսաբանող www.antitrafficking.am կայքէջում, սոցիալական ցանցերում և Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով աշխատանքային խմբում: Հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

ա. Մրցանակաբաշխության անցկացման նպատակը,

բ. Մրցանակաբաշխության անվանակարգերը,

գ. դիմելու վերջնաժամկետը:

2) իրականացնել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման թեմաներով հրապարակված նյութերի ամենամյա մշտադիտարկում և արդյունքների ներկայացում Գնահատող հանձնաժողովին մինչև մրցանակաբաշխության անցկացումը,

3) նվազագույնը կիսամյակը մեկ անգամ մեղիա ոլորտում հանդես գալ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման թեմայով նյութեր պատրաստելու խրախուսական կոչերով՝ նպատակ ունենալով մեծացնել թեմատիկ անդրադարձը՝ որպես հարթակ օգտագործելով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կանխարգելումը լուսաբանող կայքէջը և սոցիալական ցանցերը,

4) Մրցանակաբաշխությանը ներկայացված և Գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված հայտերը, զետեղել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կանխարգելումը լուսաբանող կայքէջում,

5) Գնահատող հանձնաժողովի անդամներին տրամադրել Մրցանակաբաշխությանը ներկայացված հայտերը և համատեղ քննարկումների անցկացման համար ապահովել անհրաժեշտ պայմաններ,

6) Գնահատող հանձնաժողովի անդամներին Մրցանակաբաշխությանը ներկայացված բոլոր հայտերը տրամադրելուց հետո՝ սահմանել ողջամիտ ժամկետ հայտերին ծանոթանալու, գնահատելու և գրավոր հիմնավորումներ ներկայացնելու համար,

7) Գնահատող հանձնաժողովի անդամների անհատական, նախնական նահատումից հետո կազմակերպել Գնահատող հանձնաժողովի անդամների անդիպում-քննարկում՝ հաղթող հայտերի վերջնական ընտրման համար,

8) Հաղթող հայտերի ընտրությունից, մրցանակների և հաղթող մասնակիցների լքաղեցրած տեղերը որոշելուց հետո կազմել արձանագրություն գնահատող հանձնաժողովի անդամների ստորագրությամբ: Արձանագրության մեջ պետք է նշել՝

ա. Յուրաքանչյուր անվանակարգում ներկայացրած հայտերի ցուցակ

բ. հաղթող դիմորդների և հայտերի ցուցակը

գ. անվանակարգերը և մրցանակների չափերը

դ. հատուկ մրցանակները և խրախուսանքները, եթե այդպիսիք կան

ե. մրցանակաբաշխության հովանավորների մասին տեղեկություն

զ. առկայության դեպքում՝ այլ հնարավոր որոշումներ, տեղեկություններ, հատուկ կարծիքներ:

9) Հաղթողների և հաղթած հայտերի մասին պատրաստել հատուկ ներկայացում՝ Մրցանակաբաշխության օրը մասնակիցներին ներկայացնելու համար,

10) Մրցանակաբաշխության օրը հրավիրել մամլո ասուլիս և տարածել մամլո հաղորդագրություն,

11) Մրցանակաբաշխությունից հետո մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կանխարգելումը լուսաբանող կայքէջում և սոցիալական ցանցերում զետեղել Գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված ընդհանրական մեկնաբանություններ տվյալ տարվա նյութերի վերաբերյալ՝ առաջիկայում ավելի որակով նյութեր պատրաստելու նպատակով:

12) Արձանագրությունը հանդիսանում է Մրցանակաբաշխության արդյունքները հավաստող փաստաթուղթ և հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջերում, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կանխարգելումը լուսաբանող www.antitrafficking.am կայքէջում, մրցույթի արդյունքների հետ միասին:

3. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

9. Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել մեդիա ոլորտի ինչպես անհատ ներկայացուցիչներ, այնպես էլ կազմակերպություններ:

10. Մրցանակաբաշխության մասնակիցները կարող են առաջադրվել ինչպես ինքնաառաջադրմամբ, այնպես էլ Մրցանակաբաշխությունն անցկացնող կազմակերպության առաջարկով (նախօրոք նյութի հեղինակի հետ փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով համաձայնեցնելով):

11. Նյութերը պարտադիր պետք է պարունակեն՝

- 1) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման բաղադրիչ, հանրային իրազեկման արձանագրման և կարծիքի ձևավորման գործոն (հանդուրժողականության կարևորում, արհեստների և պիտակավորման մերժում և այլն), կանխարգելիչ համատեքստ,
- 2) թրագրողական վարքականոնի պահպանումը, նյութում առկա տեղեկատվության փոխանցումը,
- 3) հրապարակված նյութերի տեղն ու ժամանակահատվածը:

12. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման բաղադրիչ, ինչպես նաև հանրային արձանագրման և կարծիքի ձևավորման գործոն չպարունակող հայտերը չեն արձանագրվում և Մրցանակաբաշխությանը չեն մասնակցում:

4. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13. Գնահատող հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրվում են Մրցանակաբաշխությունն անցկացնող կազմակերպության կողմից՝ հեղինակա ոլորտի, Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդում ընդգրկված պետական կառույցների և Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդի աշխատանքային խմբում (այսուհետ՝ Աշխատանքային սումբ) ընդգրկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով զբաղվող անկախ փորձագետներից և հաստատվում են՝ Աշխատանքային խմբի ղեկավարի կողմից:

14. Գնահատող հանձնաժողովի կազմը բաղկացած է 7 անդամից, որոնցից 3-ը՝ հեղինակա ոլորտից, 2-ը՝ պետական կառույցներից, 1-ը՝ աշխատանքային խմբում ներգրավված էՎ-ների ներկայացուցիչներից, 1-ը՝ աշխատանքային խմբում ներգրավված անկախ փորձագետներից:

15. Գնահատող հանձնաժողովի պարտականություններն են՝

- 1) գնահատել ներկայացված աշխատանքներն ըստ սույն կարգի 4-րդ կետով ներկայացրած կարգի,
- 2) որոշել հաղթողներին,
- 3) նյութը տեղափոխել մի անվանակարգից մյուսը, եթե հեղինակը հայտը ներկայացնելիս սխալ է թույլ տվել, կամ հանձնաժողովը համարում է, որ այդ փոփոխությունը կարող է ներկայացված աշխատանքի օգտին լինել,
- 4) իր հայեցողությամբ հատուկ մրցանակներով խրախուսել մրցույթին ներկայացված առանձին հայտեր,
- 5) կազմակերպել Մրցանակաբաշխությանը ներկայացված հայտերի քննարկումներ, աշխատանքային հանդիպումներ:

16. Գնահատող հանձնաժողովի անդամները կարող են հարցազրույցներ տալ և վերլուծություններ պատրաստել Մրցանակաբաշխության նպատակի, արդյունքների,

...ների, աշխատանքների ընդհանուր որակի մասին՝ հանդես գալով Գնահատող
...աժողովի անունից:

17. Գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ Մրցանակաբաշխության
...ցված յուրաքանչյուր հայտին տալիս է գնահատական սույն Կանոնակարգի 5-րդ
...ահմանված գնահատման կարգին համապատասխան և յուրաքանչյուր հայտի
...տալիս գրավոր կարծիք/հիմնավորում:

18. Գնահատող հանձնաժողովի անդամը գնահատման ժամանակ չի գնահատում
...ող, որը ներկայացված է այն կազմակերպության կամ տվյալ կազմակերպությունում
...ող հայտատուի կողմից, որտեղ աշխատում է Գնահատող հանձնաժողովի անդամը:

19. Գնահատող հանձնաժողովի անդամն իրավունք ունի հանդես գալ առանձին
...ով:

5. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՉԱՓ

20. Մրցանակաբաշխությանը ներկայացված նյութերը գնահատվում են
...ող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից՝ 0-ից 10 միավորների
...ում:

21. Մրցանակային տեղերի բաշխումն ըստ միավորների քանակի՝

- 1) Առաջին տեղ՝ 61-70 միավոր,
- 2) Երկրորդ տեղ՝ 51-60 միավոր,
- 3) Երրորդ տեղ՝ 41-50 միավոր:

22. Մրցանակաբաշխության արդյունքում հաղթող հայտերը պարզևատրվում են
...ական խրախուսմանը՝

- 1) I տեղի համար՝ 300.0 (երեք հարյուր հազար) հազար ՀՀ դրամի չափով
...այլ հարկերն ու տուրքերը),
- 2) II տեղի համար՝ 250.0 (երկու հարյուր հիսուն հազար) հազար ՀՀ դրամի
...ով (ներառյալ հարկերն ու տուրքերը),
- 3) III տեղի համար՝ 200.0 (երկու հարյուր հազար) հազար ՀՀ դրամի չափով
...այլ հարկերն ու տուրքերը):

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

23. Մրցույթի անցկացման վերաբերյալ վեճերը (բողոքները,
...աձայնությունները) լուծվում են դատական կարգով:

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

Large area of faint, illegible text in the middle of the page, likely bleed-through from the reverse side.



Faint, illegible text at the bottom of the page, likely bleed-through from the reverse side.